

ՎԵՐԱՇՆՈՒԹԻՒՆ

Հասցե՝

Rédaction du journal
"VERADZNOUTIOUN"
ROUSTCHOUK (Bulgarie)

ՅԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեան 10 Շրակի, Կեցանեսայ 5 Շրակի.

Հասցե՝

Редакция на вѣстникъ
"ВѢРАДЗНУТЮНЪ"
РУСЕ

ԴԵՊԻ ԻԴԵԱԼ

Երկիրը մաքրելն անհայտ աչքով են նայում հայ յեզափոխական գործունեության ընդլայնման վրայ, նրա ասպարեզի ընդարձակման վրայ, միաժամանակ թիւրքահայերի և ռուսահայերի մէջ մղելիք յեզափոխական պայքարի վրայ: Այլ խօսքով, նրանք երկիրը են նայում հայ յեզափոխական գործի հանրահայրական երեւոյթի վրայ: Մեղ թու՞մ է, որ իրանց այդ վերաբերութիւնը պատճառաբանելու համար նրանք չեն կարող առաջ բերել այնպիսի առարկութիւններ, որոնք արդէն նախատեսւած չը լինեն և որոնք չունենան իրանց պատասխանները: Յամենայն դէպս, վստահ մեր պաշտպանած նոր գործունեութեան անհրաժեշտութեան մասին, մէկ անհրաժեշտութիւն, որ առաջացել է նոյնիսկ հայկական իրականութեան զօրութեամբ, մենք սպասում ենք և պատրաստ ենք ուղարկել կերպով լսելու հակառակ առարկութիւնները: Գաղափարական հողը հրապարակային բանակիւններում հասարակականամբիօն է, որի բարձրութեան վերայից ամեն ձայն և ամեն միտք պատասխանում է նրա շուրջը կարող է առաջ գալ ընդգիմախօսական պայքար:

Երկրի մտաւոր պակարութեան, նրանց հոգու աղքատութեան, նրանց քստմնելի, այլ և անխիղճ հասարակական գերակատարութեան: Եւ նրանք կը զգուշանան անշուշտ հրապարակ գալ անաչառ, անկաշառ ու լրջամիտ ընդգիմախօսական խօսքով: Բայց նրանց հետ էլ չէ, որ մենք խօսուում ենք այժմ. նրանք դադարել են գոյութիւն ունենալ մեզ համար:

Ազատ և անկաշառ միտքը, անկեղծ ու համարձակ գիտակցութիւնն ընդունակ է մարդկային գաղափարներում և պատմական ու կենսական իրողութիւններում որոնելու բացաղբութիւն ու լուծումն այն մեծ խնդիրների, որ առաջ են գալիս կենսաբից: Թոյլ չը տալով իրան զոհ լինել երկիրը, ո՛չ էլ զարհուրելի մարդարեութիւնների՝ արձակած թունաւոր լեզուների կողմից, ո՛չ ընկճել կենսաբի անողորմ հարուածների և գործունեութեան դժուար, երբեմն աննուաճելի երեւոյթ ունեցող, պայմանների առաջ, նա պետք է իր անկեղծ ու խոր ուսումնասիրութեան ենթարկէ հայութեան ամենակենսական խնդիրը, որ այժմ այլևս բացարձակ կերպով ներկայանում է մի նոր կերպարանքի տակ: Նա պետք է իմանայ, որ իր առաջ արձանանում է մի պատմական ահաւոր պարտականութիւն, որը պահանջող է մտաւոր ամենաազնույնութեան և հոգու ամենագեղ յափշտակութեան — մեծ խնդիրների լուսարանութեան և քաղաքացիական արիւթեան: Նա պետք է իմանայ, որ կենսաբի իր անընդհատ և անվարձան շրջանափոխութեան և առաջխաղացման մէջ ըստ ինքեան ստեղծում է հասարակական նորանոր պահանջներ, որոնց առաջ նա, միտքըն ու գիտակցութիւնը, պետք է իրան զինւած զգայ, որպէսզի պարտութեան նահանջ տալու տեղ գիմագրաւէ նրանց, ենթարկելով նրանց իրա հետադատութեան: Կենսաբի իր ներքին, օրգանական ընթացքով գիմում է շարունակ դէպի վաղան օրը, իր ետևը թողնելով երէկան օրը և

մաքառելով այսօրան օրայ պայմաններում: Այդ կենսաբի իր հասարակական երեւոյթներով պէտք է ենթարկուէ անդամահատութեան մտքի ու գիտակցութեան առաջ, և այդ ժամանակ ի՛նչ իմաստ էլ նա ներկայացնելու լինի իր առաջխաղաց ընթացքում, նոյն իմաստի համաձայն էլ պետք է արտայայտեն մտաւոր ոյժերը և հոգու յափշտակութիւնը:

Գաղաքակիրթ ազգերի առաջագիմութեան շաւիղով ընթանալով, հայկական կենսաբի էլ այսօր զարգանում է այն ուղղութեամբ, որը տանում է նրա քայլերը դէպի մարդկային հանրակենցաղի իդէալը: Կանգնեցնել այդ անիւը ո՛չ մէկ ոյժ չէ կարող, որովհետև չը կայ մէկ ոյժ, որ կենսաբի օրգանական ոյժից զօրաւոր լինի, որ հանրակենցաղի բնական զարգացման առաջը կարողանայ արձանանալ իբրև վերջնական և անյաղթելի արդէւրէ: Եւ երկիրը մաքրելը, որ իրանց վարանումների ու տարտամութեան շնորհով չեն կարողանում գիմագրաւել այդ կենսաբի ընթացքով ստեղծւած նորանոր պահանջներին, նորանոր ծանր ու մեծ խնդիրներին, գատապարտւած են կոխկրտելու առաջագիմութեան անիւի տակ, որի շուրջը թիւնը անկարող կան ըմբռնելու: Այդ անիւը գլորում է դէպի առաջ այն ուղիով, որը տանում է մարդկային հանրակենցաղը դէպի հասարակական ու մասնաւոր իրականմանի ազատ գրութիւն:

Հայոց կենսաբի էլ եկել հասել է այդ ուղիին և ընթանում է դէպի նոյն ապագայ գրութիւնը, դէպի այդ իդէալը, — և դրանում է նոր գործունեութեան պատմական իրաւունքն ու կենսական իմաստը: Եւ այդ պայմաններում հայութեան բախտի համար գործողները միայն նրանք են և մեծ Գործը միայն նրանցն է, որոնք գործադրելով համարձակ մտքի ամենաազնույն ու բարձր ոյժերը, իրանց հոգու ամենագեղ յափշտակութեամբ հանրամարդկային և մասնաւորապէս հայկական կենսաբի հետ միասին ձգտում են շարունակ դէպի իդէալը:

ԹՌՈՒՑԻԿ ԱԿՆԱՐԿՆԵՐ

I.
(շարունակութիւն և վերջ)
Երբ և ի՞նչ է հանդիպել է արդեօք հետաքրքիր ընթերցողը, հաղարներն ու հարեւր հաղարների կողքին, որոնք առատօրէն շտայլում, վատնում են վանքեր, եկեղեցիներ նորոգելու և կառուցանելու վրայ, մի սենթ, մի սանթիմ լինեն նուիրւած հայ ազատագրութեան գործին...: Բայց ներողութիւն, այդպէս հրապարակօրէն անկարելի է հայ մեծատան համար նուիրաբերութիւն անել և իւր անձի ապահովութիւնը վտանգել Ռուսաստանում կամ Տաճկաստանում...: Շատ գեղեցիկ արդեօք գաղտնաբար, առանց առսափիլ բարեկամ ազգեցորդան, երբ և ի՞նչ է հաղարը երկարք էլ դէպի իւր առատարուղի քսակը, ուսկից շտայլեցի ոսկիներ են հստում շարականների, մղկիթների, խունկ ու մոմի և շամպանեան գինու փրփրադէզ վտակներ հոսեցնելու համար, գլորականութիւնը շահագործող մըտաւոր պոռնիկներին — գրագէտներին, այսինքն գրական շառլատաններին ու գրչակներին լէզոնները խնամելու համար, որոնք ամեն մի վայրկեան պատրաստ են քամելիոնի նման զանազան գոյներ փոխել, ստել, կեղծել, պատուէրով բողբոլներ թխել, ստորաքարշութեան և պընակալիցութեան օրինակներ ցոյց տալ, ասում ենք երբ և է նոյն լայնածաւալ քսակը բարեհաճել է հայեացք նետելու թշնամու սրի ու հրի մէջ սոչաւուր ժողովրդի վրայ: Երբ և է հայ մեծատունը զգայուել անկեղծօրէն ցանկացի՞ է օգնութեան ձեռք մեկնել հայ անպաշտպան, հարստահարուած ժողովրդին, նրա բռնաբարւած իրաւունքների վերականգնման մտահոգութեամբ: Բայց... այս ինչ միամիտ հարցեր ենք տալիս: Դիմ չ գործ ունիմ ես Սասունում, ինչ շուն է կատղել, ասում է հայ երեւելի հալոսաբը, ուսերը թօթափելով: Դիմ գլխական նաւատորմից չէ կարող Արարատ սարի գլուխը բարչրանալ, ասել է հանճարեղա

գիւանագէտը, որի դասիննրին նախանձելով մեր նոյնքան հանձարեղ մի լիօնատէրի ոսկիները չեն կարող Սասունի լեռները բարձրանալ... Երկու կրեով որ ճանապարհին քրդերի ու տաճիկներին յարձակմանը կ'ենթարկուեն ու տեղ չեն հասնել... Ահա՛ և մեր հայրենակիցներին յարգելի պատճառաբանութիւնները, որոց զօրաւորութեան առաջ անշուշտ կը խոնարհի մեծ մի բարեխիղճ ընթերցող... և տաղ կանի:

Եւ իսկապէս, ինչ կայ կայ մի Ամերիկի, մի Պաւէլ Պետրովիչի և հայ ջհել ջհելներին ստեղծած «ցնորբարանութեան» — հայ յեղափոխութեան մէջ: Եթէ երբեմն մի քանի կողմերէն է շարժումը՝ իւր վիճակն անիծելով, այն էլ անիծելով պողպատի կամ կապարի բարձրագոյն շարժման տակ, որոնք հակառակի նման, ով գիտէ ինչ թիւրիմացութեամբ խռովել են իւր հանդիստ քունն ու խաղաղութիւնը, կամ, հակառակ պարագային, աւելի խոհեմ գտնուել, շրջահայեաց եղել և յաւիտենական կեանքի ու վերջին դատաստանի սարսափները Կարբիէլ հրեշտակի ահեղաձայն փողն էլ պատկերացրել նրա առաջ... Մենք համոզուած ենք, որ Սուլթանական բռնութեան տակ հեծեճոյ ժողովրդի ազատութեան գործի համար ո՛չ հայ բուրժուան զէնք կը բարձրացնէ և ո՛չ հայ կղերականը խաչը ձեռքին պատերազմի դաշար կ'ենլնէ — բացառութիւնները օրէնք չեն: Սակայն միթէ՞ պիտի շարունակէ նա զլանալ, իւր միլիոններէ մի քանի կողմերէն զսահաբներու, իւր հայրենակիցներին ազատութեան գործի համար: Թող լաւ իմանայ հայ կրօնաւոր, որ իւր սրբութիւն սրբոցը, ոսկիների շեղը, հայ ժողովրդի արիւն քրտինքով է գիզել, այն ապրանքները, որոնց մէջ նա իբրև ոմի երկրի իշխանապարտ է համարում խորտիկնե-

րով ստամբուր պարսիկով ու զուարթարար ըմպելիքներով ախորժակը գրգռելով ազբատ, կորաքամակ աշխատաւորի արիւնով են շաղախուած ու կառուցուած, որը անկապտելի իրաւունք ունի իրեն շահագործողից իւր արգար վաստակից դուզնաքեայ բաժին պահանջելու իւր Դատի յաղթանակի համար...:

Հայ արդի անմխիթար կեանքի տխուր օրինակներին ահանատե՛ մարդ. ահամայ խորատուլուտ է հեռուստ անցեալի մէջ և այն տեղից իդէալական դէմքեր որոնում... Ու՞ր է, որոնք են Հնդկաստանի տարագիր հայրենասէրները, որոնք հսկայական միտք են յղանում, գրամով յետ գնել իրենց տառապեալ Հայրենիքը՝ հանձնատեների ձեռքից: Այսպիսի հաղորդէպ հայրենասիրութեան անցեալ, փառաւոր օրինակները յիշելիս՝ և արդի հայ մեծատան զարմանալի յանցաւոր անտարբերութեանը ահանատե՛ս — դէպի Հայ Ազատագրութիւնը — ինչպէս շաղաղակել բանաստեղծի հետ հանգունակօրէն:

Մարդու սիրտը կորսուում է ճեսնելով այսպէս սէր. Ա՛խ, նրանց կէսը կ'իտի կէսը, Գէթ սրանց մէջ երեւէր: Ս. Հայկազն. Լոնդոն.

ՊԲԱՍՏԱՎՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՆԱՐԱՆԻ ԳԵՐՈՒՄ

Մեծ ուրախութեամբ կարգացի Բազմալէպի 8-րդ համարում ՊԲԱՍՏԱՎՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՆԱՐԱՆԻ ԱՅՆ մասը, որը ուղղուած էր իմ յոգւածի դէմ՝ ՊԵՐ ուսանողութիւնը և յեղափոխական գործը (Հնչակ No 5-6): Ասում եմ՝ ուրախութեամբ, որովհետեւ Բազմալէպը մի անգամ էլ բարեհաճել է իր հայեացքը դարձնել

յեղափոխական «ոչ-ազգային» մամուլին: Եթէ մենք սրանով մի քանի խօսք ենք ուղղում ուղղել նրան, զա ոչ թէ այն պատճառով է, որ մենք ենք եղել այն յոգւածի հեղինակը, այլ որ ըսկըզբունքի խնդիր և այլոց հարց է շօշափած: Մեր այն յոգուածով մենք ցոյց էինք տուել, թէ մեր ուսանողութեան դէպի ընդհանրապէս յեղափոխական գաղափարների չէզոքութեան պատճառը լէզալիզմն է (և քաղաքական տհասութիւնը), որն ամուր կերպով բոյն է գրել մեր ուսանողների բացարձակ մեծամասնութեան գլխնեւում: Այդ բանն է ահա (և ընդհանրապէս յոգուածի ձգիւն), որ «Բազմալէպը» չէ հաւանել, և իրաւարանի պաշտօն ստանձնելով, տիրապետող կարգերի և մտքերի սկզբունքները փառաբանող աժանագիրն չբանջանը կրծքին՝ պաշտպանում է ուսանողութեան, այսինքն նրա հոգովասանքի արժանիք չէր տալ մրտութիւնը: Ուրեմն՝ Willkommen! Բազմալէպ, այսօր վաղը երևի նոյնպէս ոչնորհաւորական նամակներս կ'ստանաք՝ ձեր այդ նոր պաշտօնը դրատող գրութիւններ, և հէնց ուսանողներից... Բայց անհրաժեշտ է երեւան բերել Բազմալէպի ոմտքերը և բնորոշել նրան, որպէսզի մեր ընթերցողն իմանայ, թէ ովքեր են մեր այժմեան ուսանողութեան պաշտպանները և թէ ինչ է ինքը Բազմալէպը:

Նախ՝ Բազմալէպին դուր չի եկել հէնց այն բանը, որ ուսանողներին հասնող ձայնը բարձրանում է հորչի տակ անուշը թաքուն մնացած փողէ մը: Սառու մենք, որ ստիպուած ենք գրչի տակ թաքնուել, բայց իմացած եղէք, հայր սրբեր, որ ոչ թէ մեր կարծիքից վախենալով ենք թաքնուում կամ էլ քաշուլիւն չունենալու պատճառով, որովհետեւ մեր ուրողիս ձայնը ուրողութեան ձայնը սրտերունս

է ուղղած, այլ որ կեանքն ու միտքը ստրկացնող կարգերը դատարիտելով, ստիպուած ենք գոնէ ապրելու բնական իրաւունքը պաշտպանած լինելու համար այդպէս վարել: Սառու մենք այս, որ մեր կեանքը այդ տարրական ազատութիւնն անգամ չունի, որպէսզի գէթ կարելի լինէր լայն կերպով պահպանել բազմաթիւ գրութիւնը ձեր փոսացնող քարոզներէ: Ապարտէղը ձերն է աժմ, կատարեցէք անարգել ձեր հունձը, թարմ մտքեր սպանելով, կգայ ժամանակ (և այդ ժամանակը հեռու է), երբ մենք էլ ազատօրէն կը մրցենք ձեզ հետ: Բայց այդ չէ աւելի ցաւալիւնիս հաւատով համար, աչլ այն, որ մենք համաձայնուել ենք մեր ուրողի հնչունս սակայն ոչնտ խոպտուածայնը ուղղել ուղարգացումը՝ զի մեր պայտններուն կից սրտինս և ուրիսս և խայթող գրչով պարսաւել ու ունեսանելի գաղափարականով հեղանել ծաղրել ենք ոչնայ ուսանողները, որոնք ազգային մասնորով կհետաքրքրուին (ընդգծումները մերն են): Տեսնում ես, ընթերցող, ինչ է նշանակում առանձնաշնորհումը այժմեան հասարակութեան մէջ, բերդբերական մտքի ներկայացուցիչների աչքում: առանձնաշնորհում ես, նուրբ ձեռքեր ունիս — ուրեմն կ'զարգացած ես, կ' գիտուն, կ' մանաւանդ, ուրողութեան սրտի տէր, իսկ մեջքը կորացած մշակը, ձեռքերը կոշտացած, երեսը մուրստած բանուորը՝ ագէս է և ունկիրթ սրտի տէր: Համարձակել մի խիստ բայց իրաւայի խօսք ուղղել ուրողութեան դէմ՝ առանձնաշնորհում աշխարհը վայնասուն կը բարձրացնէ, ուրիսս տոնէական սիրոյս ներկայացուցիչները կաղաղակեն՝ «խաչ հան զգաւ: իսկ փորձիր ամեն քայլափոխում կարկուտ թափել իրաւազուրկների և ճնշուածների վը-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ
ՊԵՔՆՅՅՐԻ
բարձրակնեց Ըրսևնրեկնէ
Ա. Տ-եան

ԲԱՆԻՈՐԱՎԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ
Այս օրէնքները որ ժողովուրդի կողմէ պիտի նկատուին նպատաւոր ընդհանուր շահուն պիտի ունենան բոլորովին ուրիշ բնութեան լինելով, քան արդի պուրժուազիայի օրէնքները, որոնք կազմուած են ծառայելու համար բացառապէս իր շահերուն: Անոնք պիտի անցնին արդարութեան մաղէն և այդ պիտի ըլլայ անոնց արդարացումը: Սակայն մերթել բոլոր օրէնքները ուրովհետեւ արդի դասակարգային պետութեան մէջ օրէնքներուն մեծ մասը յոտի է, այնքան անմիտ է որքան ուղի որ ժողովուրդներուն մէջ արդիւնքներու փոխանակութիւնը արգիլուի, որովհետեւ Յրանքին ազատացած է որ վաճառականութիւնը ուրիշ բան

չէ բայց եթէ խորհուանքս վաճառականութիւնը, այսինքն արդիւնքներու փոխանակութիւնը իրենց իրական արժողութեան համեմատ, միշտ անհրաժեշտ պիտի կատարուի ամենուն բարիքին համար:

Նոյնպէս, մանաւանդ իսկզբան, կառավարութիւն մը որ արդարութեամբ պիտի կանոնաւորէ աշխատանքը, լաւագոյն միջոցը պիտի ըլլայ ջնջելու բոլոր առանձնաշնորհումները:

Շուտով շատ մը բաներու մէջ իշխանութեան միջամտութիւնը անօգուտ պիտի դառնայ և կառավարութիւնը պիտի կրնայ ետ քաշել իր խնամակալ ձեռքը:

Մտղիկները կրնան երբ պտուղը կերել, այնպէս ալ օրէնքները պիտի ոչնչանան միտով, երբ անհատը ընդունակ պիտի ըլլայ ինքզինք կառավարելու: Հասարակներու ընկերութեան մէջ իրար պիտի ուղին արգիլել ազատութեան անբնորոշ բարդաւածումը:

ոչ ամեն պէտքերուն, գէթ անոնց մեծագոյն մասին: Միեւնոյն չափով, անհատական նախաձեռնութիւնը պիտի փոխարինէ պետութեան ազդեցութեան: Ազատութիւնը և իշխանութիւնը ամենեւին թշնամիներ չեն, անոնք կրնան իրարու նեցուկ ըլլալ և բարգաւաճիլ իրարմով: Ազատութիւնը՝ նպատակն է, իսկ իշխանութիւնը՝ երաշխիքն է այդ իրաւունքին:

Արդարեւ, զեղծումներ պիտի շարունակեն գոյութիւն ունենալ, մենք արդէն ատիկայ խոստովանեցանք: Իբրաւ յաջորդող բազմաթիւ յեղափոխութիւններու մէջ նոր կառավարութիւնները միշտ ազատութիւն կը խոստանային և բռնակալութիւն կը գործադրէին: Անոնք հարկադրուած էին այդպէս վարուել պաշտպանելու համար անիրաւութեամբ ձեռք բերուած սեփականութիւններ: Յիմարներու ցեղէն վեր գետ գոյութիւն ունի բռնակալներու ցեղը:

Հայիւ մարդկութիւնը կրցաւ խոստովանել եկեղեցիին և թագաւորներու հաւատարմութեան, և սակայն մըտածելու, գործելու և ապրելու ա-

զատութիւնը դեռ մի քանիներու առանձնաշնորհումն է: Ուստի, եթէ ապագայի կառուցիչներէն չխզեն անոնց լաւագոյն զէնքը — սեփականութեան հասարակութիւնը — սկզբները, խնթները, և անտարբերները հպատակներու նոր դասակարգ մը կազմելու վտանգին պիտի ենթարկուին:

«Յեղափոխութիւնը որ կուզէ միացնել խոհեմութիւնը եռանդին, ըսած է Պլանքի, պէտք է գործածէ իր սրբամարտութեան տակ զանոնց բոլոր միջոցները հալածելու և առաջը առնելու համար անձնական և անարդար իշխանութեան»

(Շարունակելի)

րայ, ծեծիր նրանց գլուխ ու սիրտը սրքան կուզես, առանձնաշնորհաճանքի աշխարհը կասէ՛ այդպէս էլ հարկաւոր է. Բրիտտոսի աշակերտները խոյլ կտան, որովհետեւ նրանք հանկիր լին սիրտ ունեն. . . .

Շարունակելի

Ս. Կասեան

ՏԳՒՏՈՒԹԵԱՆ ԲԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

(շարունակութիւն եւ վերջ)

Գանք սակայն բուն խնդրին. ես հարցը ուղղակի գրի պրն. Վարդօսի առջև, այսինքն թէ՛ հայ սօցիալիստները վերլուծելով հայ ժողովրդի տնտեսական պայմանները թէ՛ հայաստանի և թէ՛ արտասահմանի մէջ, նկատելով նահապետական կեանքի դարևոր հիմքերուն քայքայումը ու հաւարակական նոր յարաբերութիւններու ծագումը—բնական արգիւնարեքութեան տեղի տալը ապրանքային արդիւնաբերութեան —որուն անմիջական հետեանքն է գիւղական ընտելութեան և քաղաքներու մանր սեփականատէրներու քոյրեղարխարոյթը), մատնանշելով այն անքակտելի կապը որ գոյութիւն ունի նիւթական նոր պայմաններու և ատոնցմէ տրամաբանօրէն ծնունդ առնող քաղաքական և հասարակական եղբայրութիւններու, դէպքերու և քաղաքացիութեան մէջ. —կը շեշտեն պատմական այն անհրաժեշտ իրողութիւնը թէ՛ Հայաստան կը գտնուի այսօր յեղափոխութեան մը նախընթաց օրը, երբ ընդհանրապէս իւր աստիճանական ու դանդաղ դարգացումը, ապահով ոստումով մը, պիտի անցնի մէկ գրութեանէ դէպի միւսը, միապետութենէ սահմանադրութիւն: Բայց հայ սօցիալ-դէմօքրատիստները քաղաքական ազատութեան համար մղուած այս կռիւով չեն բռնադատու ու չեն կրնար կանգնիլ ազգայնական կոխակերպող վեր-

*) Ասոր մասին աւելի մանրամասնօրէն տեսնել Վ. Վահուանի «հայկական իրականութիւն» եւ ուրիշ յօդուածներ «հանդէս»-ին մէջ.

րայ, որովհետեւ իրենց պաշտպանած դասակարգին երգուելով լինումինը րազգու թիւնները չեն, այլ քարի թաղիւղմը, որ օրէ օր իր տուր ճիրանները կը տարածէ հայ ժողովրդին վրայ. Բայց մաթիւ փաստեր կը հաստատեն մեր այս հայեցակէտը:

Ըսի թէ սօցիալ-դէմօքրատիստները կը կանգնին դասակարգային կռուի հողին վրայ, այսինքն միշտ ու ամեն տեղ անհրաժեշտ կոչուած մեն առիթէ՛ Երբեք արիւթի զասակարգային գիտակցութիւնը զարգացնելու ու մշակելու համար, որպէսզի ան ըմբռնէ իր տնտեսական գրութիւնը իբրև շահագործող դասակարգ, հասկնայ շահագործողներուն դէմ մղած կռուին մեծ ու խորունկ իմաստը և գիտնայ թէ բանորին ու քաղաքացիներին շահերուն մէջ շոշափող գիծ չկայ, քոյրեղարխարո պարտաւարկային շահերուն մէջ բընաւ միացուցիչ օգակ գոյութիւն չունի, թէ՛ այս երկու դասակարգերը փոխադարձաբար իրար կը բացասեն թէ՛ անոնց կռուի միշտ անհաշտ է և իբր պայքարող բանակ ատոնցմէ մէկը անկասկապ պէտք է մեղմի միւսին տեղ տալու համար: Ահա այս հողին վերայ է որ սօցիալ-դէմօքրատիստները կը կազմակերպեն բոլորէրիւթ իբրև ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւն, որ ունի իր ըսկըզբունքները, գաբօրիքան, տիսցիբիւնան, և բարոյութի տարբեր գոյութիւն ունեցող բարձր պուրժուակական կուսակցութիւններէ ու հատուածներէ: Այսպէս կազմակերպուած հայ բանտրական դասակարգը պիտի կանգնի մեր յեղափոխական շարժման գլուխը և վճռող ազդակի դեր պիտի խաղայ, ինչպէս էր ու է ամեն տեղ՝ Գերմանիա, Ֆրանսա, Պելճիքա, Ռուսիա, Պուլկարիա և այլն:

Ներկայ շարժումները, որ կը կատարուին Ատանայի, Պրուսայի, Կարսի, Պարսի և ընդհանրապէս Ռուսահայաստանի մէջ, միջոց մըն է սօցիալ-քեմօքրատիստ մեղմի մէջ կոնց կոնկրետ ու ցարգացնելու հայ քոյրեղարխարի դասակարգային գիտակցութիւնը, որովհետեւ ohne klassen bewusste Arbeiter, kein sozialismus: Իսկ երբ սօցիալ-դէ-

մօքրատիստ կը դադրի բոլորէրիւթ իրախի դասակարգային գիտակցութիւնը զարգացնելէ, կը դարձի նաեւ սօցիալ դէմօքրատիստ: «Մենք գիտենք, ընկերներ, այն ճամբան որ կառուցողութիւնը սօցիալ դէմօքրատիստները գէպի իրենց մեծ նպատակը: Ան կը սահմանուի շատ քիչ բաներով՝ քոյրեղարխարի դասակարգային գիտակցութեան ցարգացումը և կարգաւորումը: Այն որ կը գործէ այս գիտակցութեան զարգացման համար, սօցիալիստ է: Ան սո՛ւտապէս արգելք կը ըլլայ, սօցիալիզմի լինումին է: Իսկ ան որ ասոր հետ անմիջական յարաբերութիւն չունեցող գործերով կը զբաղի, ան անմիջական յարաբերութիւն ալ չունի սօցիալիզմի հետ: . . . Այն յեղափոխականը որ զայն (դասակարգային գիտակցութիւնը) զարգացնելու գործունէութիւնը. — Ա. Յ.) կը հերքէ, ատով կապացուցանէ որ կամ սօցիալիզմի լինումի է, կամ ատով չհետաքրքրուի, կամ գեռ սօցիալիստ եղած չէ և կամ սօցիալիստ ըլլալէ աջ դադրած է:») Եւ մենք միշտ և ամեն ուրեք պիտի մնանք սօցիալ-դէմօքրատիստ, յեղափոխական սօցիալիզմի հետ և ողորդ, միայն հայ բոլորէրիւթ արիւթի ներկայացուցիչներ և պաշտպաններ՝ հայ ու օտար քարի լիստներու դէմ անոր մղած պայքարին մէջ: Յեղափոխական այս իտէպիզմին պիտի փարինք ամենէն առաջ, ինչ որ ալ ուզէ ըլլալ, մենք պիտի կրենք ամենէն դժուարինը, պիտի կատարենք բարձրագոյնը և արժանի պիտի ըլլանք այն մեծ խնդիրներուն, որոնք մեզ կը սպասեն:») Ուրեմն մեր յարուցած առաջին հարցն այն է թէ մենք իբր կուսակցութիւն հայ բոլորէրիւթ արիւթ, հայ բանտրական դասակարգի, ընդհանուր բան մը չունինք պանդան «ճարտուածանա և ուրիշ պուրժուակական հատուածներու հետ, և մենք չենք կրնար երբէք լծողու մեր գլխաւոր, չըսեմ միակ, գործը, փախադրուել

*) Տես «Озадачахъ социалистовъ» Г. Плеханова, երես 62—63: ***) Տես Карлъ Кауцки «Социална-та реформа и социалната революция» երես 74:

զանազան պուրժուակական ու մանրապուրժուակական կուսակցութիւններու բանակը և անոնց հետ միասին գործել, որովհետեւ աս կը ծառայէ միմադնելու — նոյն իսկ եթէ այդ առժամայէս ըլլայ—դասակարգային անդակօնի մը բոլորէրիւթ և պուրժուակային միջև:

Այս մասին բան մը ըսէք, պ. Վարդօ, փոխանակ դուրս տարուանպէս հայհոյանքներ ու զանազան յիմարութիւններ, որոնք ձեր մտաւորական ապիկարութիւնը ապացուցանելէ զատ ուրիշ արդիւնք չեն ունենար:

Իսկ ձեր մանրապուրժուակական ստիբիլ մարդ արարածը, ոչ միայն բանտրու հայեացքին պիտի վերագառնանք, այլորդով և պիտի ապացուցանեն ատոր տեսականապէս անհիմն ըլլալը:

Յիլպի Ա. Յակոբեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն Ա Մ Ա Կ Կ Ո Վ Կ Ա Ս Ի Ց
II
6/19 Օգոստ. 1903

Բագուի գործադուլը կազմակերպող Ռուսական Սօցիալ-Դէմօքրատ բանտրական կուսակցութիւնը եռանգուն գործունէութիւն ցոյց տուց: Առանց զաղաքելու ամենօր թոռոցիկներէ բաց լծողում, ուր պարզուում էր բանտրներին իրենց տալիք պահանջները համաձայն իրենց տեղական պայմաններին: Կուսակցութիւնը չբաւականացաւ միմիայն բանտր դատով. — Թոռոցիկներ բաց լծողնց նաև գործակատարների անտնով, որոնց գրութիւնը բանտրի գրութիւնից պակաս ծանր չէ:

Սա նոցա այսպէս ասած գործունէութեան արտաքին մասն էր, ներքինը բաւական աղմկալից էր ու իր վերջաւորութեամբը ազդեց գործադուլի ընթացքի վրայ:

Երբ գործադուլը ձեռնարկեցին, առաջին իսկ քայլից հարց ծագեց գործադուլը քաղաքական հողի վրայ դնել թէ տնտեսական կամ ուրիշ խօսքով՝ կառավարու-

ՊԱՂԱԿԱՆ ԹԵՂԱԿՆԵՐԻ ՄԷՋ

Եւրոպա չը համարակիր երբէք ուզել Մակեդոնիոյ վերջնական ազատութիւնը ու անոր անկախ ու ինքնավար կառավարութիւնը դառնալը հեռուեալ նկատուածներով:

Առաջին, որովհետեւ ինչպէս կը տեսնուին ազգայնական շարժումները — Մակեդոնիա զանազան ազգութիւններու համախումբում մըն է, և այս ազգութիւններու ամբողջական ազատութիւնը կը բնայ յառաջ րեքիւնքերն պայքարներ, որոնք պիտի ստեղծեն այնպիսի վիճակ մը, որ ոչ նուազ վտանգաւոր պիտի ըլլայ: *) «Ինքնավար Մակեդո-

*) Տես Գաղղիական դեղին տետրա-

նիա ատ կը նշանակէ կազմակերպել անխնայութիւն» ամիս մը առաջ ըսաւ պ. Տելքասէ, մակեդոնական հարցին հետ ուղղակի կերպով «չչահագրգռող» կառավարութեան նախարարը:

Երկրորդ, որովհետեւ Մակեդոնիոյ անջատուելովը Թուրք կայսրութիւնը կը պզտիկնայ, աւելի կը տկարանայ, հետեւաբար շատ աւելի դիւրաւ պիտի ազդուի Ռուսիայէն, իսկ նպատաւոր վայրկեանին շատ դիւրաւ պիտի անցնի Ռուսիոյ ձեռքը:

Երրորդ, որովհետեւ Եւրոպան ալ կը վախնայ նոր ազատուած սլավ իշխանութիւններէ, որոնք սովորաբար դժուար կրնան զիմադրել ու տոկալ կը Մակեդոնական խնդրի վերաբերեալ էլ 42:

ուսակական զօրաւոր ազդեցութեան և ամեն ժամ անոր քով երթալու և դէպի Կ. Պօլիս՝ անոր իբրև կամուրջ ծառայելու վտանգին ենթակայ են:

Չորրորդ, որովհետեւ այսօր Եւրոպան, մանաւանդ Գերմանիա ու Աւստրիա — Տանկաստանէ մը աւելի մեծ դիւրութեամբ կրնայ խլել այն ամեն ուղածները, զորս երբէք չպիտի կըրնար խլել երիտասարդ ու կենսունակ իշխանութիւններէ:

«Թուրքիոյ համար մեծ բարեբաղտութիւն է, ըսած է, ըստ «Die Information»-ի, իտալական նախարարը, որ Պալքանեան իշխանութիւնները իրարու հետ համաձայն չեն և որքան որ անոնք շարունակեն իրենց փոխադարձ մրցումը Արեւելքի Statu quo-ն պիտի մնայ անվերջ: Այս բոլորը ի նկատի ունենալով արեւմտեան Եւրոպա կը մտածէ չչատ

մը տեսակէտներով, իրարու հետ մըրցող այս ազգերուն բարձրագոյն կառավարութիւնը թրքական ձեռքերու մէջ գտնուելը կրնայ համարուիլ իբրև խաղաղութեան երաշխիք մը:») Եւրոպա կը մտածէ — և հոս այլեւս կը բաժնուի Ռուսիայէն — թէ որքան որ Թուրքիա կենսունակ է, որքան որ աւելի կը քաղաքակրթութիւնը քան աւելի կը քաղաքակրթական ապագամ մը պիտի դառնայ ուսակական ձգտումներուն դէմ դէպի վտանգը:

*) Տես Ֆրանսական «Կեղին տետրակը» Մակեդոնական հարցի մասին» էջ 42: Կը ցուցնէ որ այս պահուած ձեռքերին չունինք Անգլիական կառավարութեան կապոյտ տետրակն ալ, որպէսզի ալ աւելի հաստատուն մը կարծիքները այս կէտին վրայ: քարգ. Շանպագ (Շարունակելի)

